

Տարբեր ենթակառուցվածքների աստղեր տարբեր էվոլյուցիոն փուլերում են գտնվում.

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի բացահայտումը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողները ցույց են տվել, որ տարբեր ենթակառուցվածքների աստղեր տարբեր էվոլյուցիոն փուլերում են գտնվում, և հաստատել են արտահայտված կապ աստղերի էվոլյուցիոն տարիքի և նրանց շրջապատող զագափոշային նյութի հատկությունների միջև:

«Աստղաֆիզիկայում աստղառաջացման գործընթացի հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը շատ մեծ նշանակություն ունի: Մեր կողմից ներկայացված «IRAS05168+3634 աստղառաջացման տիրույթի կառուցվածքը» աշխատանքում ցույց ենք տվել, որ տարբեր ենթակառուցվածքների աստղեր տարբեր էվոլյուցիոն փուլերում են գտնվում, և կա լավ արտահայտված կապ աստղերի էվոլյուցիոն տարիքի և նրանց շրջապատող զագափոշային նյութի հատկությունների հետ: Աշխատանքում տվյալ աստղառաջացման տիրույթի համար պարզաբանվել են որոշակի օրինաչափություններ աստղային բնակչության և նրանց մայր ամպի զագափոշային միջավայրի միջև», - ասաց ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ելենա Նիկողոսյանը: Ըստ նրա՝ կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ ամենամեծ միջաստղային նյութի խտություն և զանգված ունեցող ենթատիրույթ-

ները պարունակում են 1 դասի էվոլյուցիոն փուլ ունեցող երիտասարդ աստղային օբյեկտների ամենամեծ տոկոսը: «Բոլոր ենթատիրույթներում աստղերի էվոլյուցիոն տարիքի լայն բաշխումը (10^5 -ից մինչև 10^7 տարի) վկայում է, որ դիտարկվող աստղառաջացման տիրույթում աստղերի ձևավորման ընթացքն ունի ինքնաբուխ և հաջորդական խտացումների բնույթ: Այն ենթատիրույթներում, որտեղ սկզբնական, մայր մոլեկուլային ամպի զանգվածն ավելի մեծ է, այս ընթացքը, հավանաբար, ավելի ակտիվ է և երկարատև», - ասաց Ելենա Նիկողոսյանը:

Հետազոտությունն իրականացվել է «Աստղառաջացման տիրույթներ՝ ձևավորում և էվոլյուցիա» առաջատար հետազոտությունների աջակցության 21AG-1C044 գիտական թեմայի շրջանակում: Գիտական արդյունքի վերաբերյալ հոդված է տպագրվել «Astrophysics and Space Science» աստղագիտության, աստղաֆիզիկայի և տիեզերական գիտությունների միջազգային ամսագրում: Աշխատանքի արդյունքները զեկուցվել են Շվեդիայի Չալմերսի տեխնոլոգիական համալսարանում 2022թ. հունիսի 20-24-ին տեղի ունեցած «From Stars to Galaxies II» միջազգային գիտաժողովի ժամանակ:

Գիտական արդյունքի չորս համահեղինակներից երեքը երիտասարդ գիտաշխատողներ են:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

